Կիսամյակային լրաթերթ

հունվար-հունիս, 2018թ.

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

Կիսամյակային լրաթերթ

հունվար-հունիս 2018թ.

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա
ք. Երևան, 2018թ.

«Մենք օրեցօր առերեսվում ենք գենդերային հիմքով բռնության ինստիտուցիոնալացված ձևերի, որոնք սնուցվում և լեգիտիմացվում են Հայաստանում առկա գերիշխող մշակույթի կողմից:

Զարուհի Հովհաննիսյան
(Հաղորդակցման և արտաքին կապերի պատասխանատու,
«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա)



Լուսանկարն արվել է ի աջակցություն Ասյա Խաչատրյանին կազմակերպված բողոքի ցույցի ընթացքում: Ա. Խաչատրյանը ոստիկանական բռնության էր ենթարկվել Լեռնային Ղարաբաղում կապույտ մազերի և արտաքին տեսքի պատճառով: Պաստառի վրա գրված է՝ «Կապույտի մեջ թեմա կա՞»: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան ակտիվ մասնակցություն է ունեցել բողոքի գործողություններում և հայտարարություններ հրապարակել՝ ի զորակցություն Ա. Խաչատրյանին:

Բովանդակություն

2010-2018 թվականներ. Հայացք անցլային 3
Օրենսդրություն և դատական մշտադիտարկում 7
Ձատագովություն և ակտիվիզմ 9
Իրազեկում և կարողությունների զարգացում 11

2010-2018 թվականներ. Հայացք անցլային

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան (այսուհետ՝ ԸԿՆԲԿ) հիմնադրվել է 2010 թվականին: Կոալիցիայի ստեղծումը մի քանի հասարակական կազմակերպությունների արձագանքն էր 20 տարեկան կնոջ՝ Զարուհի Պետրոսյանի սպանությանը, որը մահացավ ամուսնու կողմից դաժան ծեծի հետևանքով:

Զարուհու սպանությունն այն ազդակն էր, որը հանրության ուշադրության կենտրոն բերեց Հայաստանում երկար տարիներ լռեցված կանանց նկատմամբ բռնության և, մասնավորապես, ընտանեկան բռնության խնդիրը:

Սկսած 2010թ.-ից՝ ԸԿՆԲԿ-ն դարձավ կարևոր հարթակ, որը բռնության և խտրականության դեմ պայքարի շուրջ համախմբեց կանանց իրավունքներով և գենդերային հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների:

Տարիների ընթացքում ԸԿՆԲԿ-ն ընդլայնվեց՝ դառնալով ավելի ներկայացուցչական: Այն ներկայումս միավորում է 10 կազմակերպություն՝

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ,

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ,

«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ,

«Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ,

«Հասարակություն առանց բռնության» ՀԿ,

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ,

«Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ,

«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ ,

«Հաշմանդամություն և ներառական զարգացում» (նախկինում՝ «Դիսըբիլիթի ինֆո») ՀԿ,

«Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ:

Կոալիցիայի անդամ կազմակերպությունները ներկայացնում են կանանց տարբեր խմբերի շահերը, այդ թվում՝ նաև ԼԲՏ (լեսբի, բիսեքսուալ, տրանսգենդեր) կանանց, գյուղաբնակ կանանց, գենդերային հիմքով բռնության տարբեր ձևերի ենթարկված կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանանց:

Մինչ այժմ կոալիցիան ոչ միայն պայքարել է կանանց նկատմամբ բռնությունը կանխարգելող համապատասխան օրենսդրական և քաղաքականության փոփոխությունների ընդունման համար, այլև հետևողական պայքար է մղել՝ ուղղված հասարակության լայն շերտերում խորապես հաստատված գենդերային կարծրատիպերի և սեքսիստական ու կնատյաց պատմույթի վերացմանը:

Ամեն տարի կոալիցիայի անդամ կազմակերպություններն ընտանեկան և սեռական բռնության դեպքերի վերաբերյալ միջինում 5000 ահազանգ են ստանում թեժ գծերի ծառայությունների միջոցով: Կոալիցիայի և իր անդամների աշխատանքը հաճախ է վտանգի ենթարկվում հասարակության տարբեր խմբերի, այդ թվում՝ ազգայնական խմբավորումների ու հակագենդերային շարժումների կողմից:

2018թ. ապրիլին տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից առաջ իշխանություն հանդիսացող Հայաստանի հան-

ռապետական կուսակցության կողմից առաջնորդվող նախորդ կառավարությունը չուներ կանանց նկատմամբ բռնության խնդրին արձագանքելու և լուծում տալու քաղաքական կամք: Արդյունքում, Հայաստանում ընտանեկան բռնության անհանգստացնող ծավալները և կնասպանության ահասարսուռ դեպքերը չեն դիտարկվել իբրև համապետական խնդիր՝ անհապաղ լուծման հրամայականով[1]:

Քաղաքական կամքի բացակայությունը՝ երաշխավորելու յուրաքանչյուր կնոջ՝ բռնությունից և խտրականությունից ազատ ապրելու իրավունքը արտահայտվում էր խնդիրը կարգավորող օրենսդրական մեխանիզմների երկարամյա բացակայությամբ: Կոալիցիայի անդամներից 10 տարվա ջատագովական աշխատանք պահանջվեց ընտանեկան բռնությունը կանխարգելող օրենքի ընդունման համար: Հսկայական ջանքեր գործադրվեցին ընտանեկան բռնությանը վերաբերող օրենքի հանրային լսումների և ընդունման գործընթացների ընթացքում: Կոալիցիայի փորձագետներն ու իրավաբանները մշակեցին օրենսդրական վերլուծության փաթեթներ՝ բարձրաձայնելով նաև օրենքի խնդրային դրույթների ու բացերի մասին:

---

[1] Բռնության դեպքերի վերաբերյալ լրացուցից տեղեկատվության համար տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2016թ. տարեկան զեկույցը, http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/28731eccde752a30c70feae24a4a7de7.pdf, ՄԻՊ 2017թ. տարեկան զեկույցը, http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/59297c7b4276c9dbf19cd1f1cfcd92a8.pdf, «Կնասպանությունը Հայաստանում» զեկույցը, ԸԿՆԲԿ, 2016թ., http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2016/05/Femicide_Report_ARM.pdf

Տարեկան

5000

ահազանգ ընտանեկան և սեռական բռնության դեպքերի վերաբերյալ

Օրենքը, որը փոփոխվեց և անվանվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշ-խության վերականգնման մասին» ՀՀ օրենք, ընդունվեց 2017թ. դեկտեմբերին և ուժի մեջ մտավ 2018թ. հուլիսի 30-ին[2]: Չնայած նրան, որ օրենքի ընդունումը դրական քայլ էր, այն շարունակում է զգալիորեն անհամապատաս-խան լինել ընտանեկան բռնությունից կանանց պաշտպանության միջազգային իրավական ստանդարտներին:

Այս հաշվետվությունը ներկայացնում է 2018թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում կոալիցիայի կողմից իրականացված հիմնական գործողությունները և վերոնշյալ օրենքի ընդունմանը հաջորդող կիսամյակի ընթացքում տեղի ունեցած առանցքային զարգացումները:

Սույն օրենքի ենթաօրենսդրական ակտերի մշակումը, ազգային օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված ջատագովական աշխատանքները, ընտանեկան և ինստիտուցիոնալ բռնության մի քանի ցայտուն դեպքերի վերաբերյալ արշավների կազմակերպումը, դատական մշտադիտարկումը, ինչպես նաև ծառայություն մատուցողների, իրավաբանների և ՁԼՄ ներկայացուցիչների կարողությունների զարգացումը տարվա սկզբից եղել են կոալիցիայի գործու-նեության կենտրոնում:

---

[2] *Տե՛ս «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը, http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=118672*

Օրենսդրություն և դատական մշտադիտարկում

Ընտանեկան բռնությունը կանխարգելող և պատժող համապատասխան օրենսդրական կարգավորումների ընդունման ուղղությամբ կոալիցիայի աշխատանքները 2018թ.-ին նոր թափ ստացան՝ հատկապես կենտրոնանալով օրենսդրության համապատասխանեցմանը միջազգային չափանիշներին և Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին:

Չնայած մի շարք հակասական դրույթների՝ ընտանեկան բռնության վերաբերյալ օրենքի ընդունումը կարևոր քայլ է Հայաստանում կանանց իրավունքների արդյունավետ պաշտպանության ուղղությամբ: 2018թ. փետրվարից սկսած՝ կոալիցիան ակտիվորեն ներգրավված է եղել վերոնշյալ օրենքի ենթաօրենսդրական ակտերի մշակման և վերանայման աշխատանքներում՝ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համագործակցությամբ: Այս գործընթացներում ԸԿՆԲԿ-ի մասնակցությունը հույժ նշանակություն ուներ, քանի որ ապահովում էր ընտանեկան բռնության ենթարկված կանանց կարիքների արտացոլումը սույն կարգավորումներում:

ԸԿՆԲԿ-ի՝ օրենսդրության և քաղաքականության հետ կապված ջանքերը չեն սահմանափակվել ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված օրենսդրությամբ: Մեր թիմը մեկնաբանություններ է մշակել Ընտրական օրենսգրքի փոփոխությունների առաջարկների

վերաբերյալ, որտեղ գենդերային տեսակետը գործնականում բացակայում էր:

Այժմ ԸԿՆԲԿ-ի օրենսդրական առաջնայնություններից մեկը ՀՀ-ի կողմից 2018թ. սկզբին ստորագրված «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի վավերացմանն ուղղված աշխատանքներն են[3]:

Օրենսդրական բացերի ուսումնասիրությունը և քաղաքականության վերլուծությունը մեր աշխատանքի մեկ այլ կարևոր ուղղություն է: Հունվարին կոալիցիան հանրությանը ներկայացրեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի գնահատման հաշվետվությունը[4]: Կառույցը 2018-ի սկզբին նաև ակտիվորեն հանրայնացրել է իր հեղինակած «Օրինականացնելով գենդերային կարծրատիպերը՝ կարծրատիպերի դերն ու արդարադատության մատչելիությունը գենդերային հիմքով ընտանեկան բռնության դատական գործերի համատեքստում» հետազոտությունը[5]:

Հետազոտություններն արժանացել են ՁԼՄ-ների կողմից լայն ուշադրության, իսկ դրանց արդյունքները լայնորեն քննարկվել և տարածվել են բազմաթիվ հարթակներում[6]:

2018թ. սկզբից կոալիցիայի ուշադրության կենտրոնում է եղել նաև ընտանեկան բռնության ենթարկված Թագուհի Մանսուրյանի, Սիրանուշ Գայոլանի, Նաիրա Սմբատյանի և Եվա Հ-ի դատական գործընթացների մշտադիտարկումը:

---

[3] Տե՛ս Ստամբուլյան կոնվենցիան, https://rm.coe.int/168008482e
[4] Տե՛ս հետազոտությունը, http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2018/01/gelaw_report.pdf
[5] Տե՛ս հետազոտությունը, http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2018/01/gelaw_report.pdf
[6] Տե՛ս զեկույցների ներկայացման վերաբերյալ հոդվածներ, https://www.aravot.am/2018/01/25/933180/, https://www.aravot.am/2018/01/25/933348/, http://womennet.am/gender-equality-law/

Ջատագովություն և ակտիվիզմ

ԸԿՆԲԿ-ն շարունակում է ջատագովական աշխատանքները, որոնք ուղղված են Հայաստանում ընտանեկան բռնության հիմնախնդրի հաղթահարմանը: Մեր կողմից կազմակերպվող հանրային արշավները թիրախավորում են կանանց, ԸԲ (ընտանեկան բռնություն) վերապրածների, պետական պաշտոնյաների, երիտասարդների և ընդհանուր հանրությանը: Ինչպես և նախկինում, մեզ համար առաջնային է պատմույթի փոփոխությունը բազմակողմանի համագործակցության, ակտիվիստական գործելաոճի և արշավների միջոցով: Այս նպատակով մենք շարունակում ենք համագործակցել ՁԼՄ-ների հետ, որպեսզի բարձրացնենք հանրության իրազեկվածության մակարդակն ընտանեկան և գենդերային հիմքով բռնության վերաբերյալ և փոխենք հասարակության ընկալումներն այդ հիմնախնդիրների շուրջ:

Տարվա սկզբից կոալիցիան արձագանքեց կանանց նկատմամբ համակարգային բռնության մի շարք դեպքերի, ինչպիսիք էին, օրինակ, Երևանի ավագանու նիստերից մեկի ընթացքում տեղի ունեցած բռնությունն ու սեռական ոտնձգությունը «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ Մարինա Խաչատրյանի հանդեպ: Դեպքի վերաբերյալ կոալիցիան հայտարարություն տարածեց և կազմակերպված դուրս եկավ բողոքի ակցիայի Երևանի քաղաքապետարանի

առջև[7, 8]: Կոալիցիան սատարել է նաև բռնության թիրախում հայտնված Ռուզաննա Ադանալյանին, ով մի շարք պետական օղակների կողմից սպառնալիքներ էր ստանում իր որդու սպանության դեպքով արդար դատաքննություն պահանջելիս:

ԸԿՆԲԿ-ն նաև ակտիվորեն ներգրավվեց Լեռնային Ղարաբաղում ոստիկանական բռնության ենթարկված Ասյա Խաչատրյանի պաշտպանությանն ուղղված բողոքի ցույցերում՝ արդարություն պահանջելով վերջինիս համար:

Կանանց նկատմամբ համակարգային բռնության խնդիրը հանրային ուշադրության առարկա դարձնելու նպատակով ԸԿՆԲԿ-ն հայտարարություններ է տարածել Ռուզաննա Ադանալյանի, Ասյա Խաչատրյանի, Մարինա Խաչատրյանի և Հասմիկ Սարգսյանի դեմ բռնության և խտրականության դեպքերի վերաբերյալ[9]:

Վերջապես, կոալիցիայի ջատագովական աշխատանքները չէին կարող շրջանցել ապրիլին Հայաստանում տեղի ունեցած կարևորագույն գործընթացը՝ «Թավշյա» հեղափոխությունը: Մայիսին մեր թիմն ունեցավ շարժման վերլուծությանն ուղղված հանդիպում, որի ընթացքում անդրադարձ կատարեցինք հեղափոխության օրերին մեր և առհասարակ կանանց մասնակցությանն ու ներդրմանը, կիսվեցինք տպավորություններով և տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից ունեցած ակնկալիքներով:

---

[7] *Տե՛ս ցույցի տեսահոլովակը, https://youtu.be/7M7ewYV8O5g*

[8] *Տե՛ս կոալիցիայի հայտարարությունը, https://goo.gl/U3yfgF*

[9] *Տե՛ս Ռուզաննա Ադանալյանի դեպքի վերաբերյալ հայտարարությունը, https://goo.gl/AuEkM5, տե՛ս Ասյա Խաչատրյանի դեպքի վերաբերյալ հայտարարությունը, https://goo.gl/Lmmr5K*

Իրազեկում և կարողությունների զարգացում

Գենդերային հիմքով բռնություն վերապրած կանանց համար իրենց ձայնը լսելի դարձնելու և արդարություն պահանջելու հարթակների ստեղծումը ԸԿՆԲԿ գործունեության առաջնայնություններից է: Բռնության ենթարկված կանանց անհատական պատմությունների մասին հանրային իրազեկվածության բարձրացումը զորեղ գործիք է հայաստանյան իրականությունում տիրապետող պատմությթը փոխելու համար, պատմույթ, որը լի է կնատյացությամբ և կառուցված է տղամարդկանց գերիշխանության հղացքի շուրջ:

Այս տարվա առաջին եռամսյակի ընթացքում ԸԿՆԲԿ-ն թողարկեց երեք տեսահոլովակ, որոնց միջոցով հնարավոր դարձավ լայնորեն տարածել ընտանեկան բռնության կանխարգելման և պատժի մասին մի շարք կարևոր ուղերձներ: Այդ տեսահոլովակներն էին՝ «Սիրանուշ Գալոյան. 16 տարի ենթարկվել է բռնության»[10], «Կոտրի՛ր բռնության շղթան, կառուցի՛ր քո կամուրջը»[11], «Փորձենք հասկանալ, թե ինչ է ընտանիքը»[12]: Առաջին տեսահոլովակում ներկայացված է Սիրանուշ Գալոյանի կյանքի պատմությունը: Սիրանուշը, ով տարիներ շարունակ ենթարկվել է ընտանեկան բռնության, այժմ բռնություն վերապրած

Սիրանուշ Գալոյան, ընտանեկան բռնություն վերապրած կին

[10] *Տե՛ս հոլովակը, https://youtu.be/Ch64d8GPHQ8*
[11] *Տե՛ս հոլովակը, https://youtu.be/ilkPtpXFYdE*
[12] *Տե՛ս հոլովակը, https://youtu.be/r_N4AVQvCPY*

կանանց իրավունքների պաշտպանության ակտիվ ջատագով է: Կոալիցիայի տեսանյութերը մեծ տարածում գտան սոցիալական ցանցերում, այն աստիճան, որ ԸԿՆԲԿ թիմը որոշեց կապ հաստատել Հայաստանի հանրային հեռուստաընկերության հետ և պայմանավորվածություն ձեռք բերել տեսանյութերը Հայաստանի ամբողջ տարածքում ցուցադրելու վերաբերյալ:

Մեզ համար հույժ կարևոր է ականատես լինել, թե ինչպես են Սիրանուշի պես կանայք իրենց մեջ ուժ գտնում դուրս գալու կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի առաջնագիծ: Սա հնարավոր է դառնում նաև ԸԲ վերապրած կանանց կարողությունների զարգացման, նրանց հետ տևական աշխատանքի շնորհիվ: Հենց այս նպատակով մայիսին ԸԿՆԲԿ-ն կազմակերպեց իրազեկվածության բարձրացմանն ու զորեղացմանն ուղղված հանդիպում-դասընթաց ԸԲ վերապրած 17 կանանց հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ընտանեկան բռնության հոգեբանական ազդեցությունն ու հետևանքները, վերջերս ընդունված ԸԲ օրենքը և դրա շրջանակներում տրամադրվող պաշտպանական և կանխարգելման մեխանիզմները: Միաժամանակ, այս տեսակի հանդիպումների միջոցով մենք փորձում ենք ապահով հարթակ և տարածք տրամադրել կանանց համար, որտեղ իրենք կարող են կիսել իրենց պատմությունները, վախերն ու հեռանկարները՝ ստեղծելով փոքրիկ ինքնօգնության խմբեր:

Կարողությունների զարգացման գործողությունների համատեքստում տարվա սկզբից ԸԿՆԲԿ թիմը աշխատում է նաև ՁԼՄ դաշտի ներկայացուցիչների, սոցիալական աշխատողների և իրավաբանների հետ: Հունվար-փետրվար ամիսներին կոալիցիան իրականացրեց դասընթացներ թվով 33 սոցիալական աշխատողների[13] և 15 իրավաբանների[14] հետ: Դասընթացներն իրականացնող՝ կոալիցիայի անդամ կազմակերպությունների հոգեբանների, սոցիալական աշխատողների, իրավաբանների, փաստաբանների շնորհիվ հնարավոր դարձավ խորացնել մասնակիցների գիտելիքները ընտանեկան բռնության հիմնախնդրի, ընդունված օրենքի, օրենքով սահմանվող մեխանիզմների և դրանց կիրարկման վերաբերյալ:

Վերջապես, ԸԲ դեպքերի գենդերազգայուն լուսաբանումը խթանելու համար հունիսին ԸԿՆԲԿ թիմը վերապատ-

[13] *Տե՛ս սոցիալական աշխատողների վերապատրաստման մասին պատմող հոդվածը, https://goo.gl/MGeuJS*
[14] *Տե՛ս իրավաբանների վերապատրաստման մասին պատմող հոդվածը, https://goo.gl/3xJRr7*

ռաստման դասընթացներ իրականացրեց ՁԼՄ դաշտի 8 փորձագետների հետ: Դասընթացների ընթացքում խոսվեց, թե ինչպես են կանայք ներկայացվում մեդիա դաշտում, ինչպես են ՁԼՄ-ները նպաստում կնոջ նկատմամբ բռնության մշակույթի վերարտադրմանը, կնոջ կրկնակի զոհականացմանը, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության արդարացմանը[15]:

[15] *Տե՛ս մեդիա փորձագետների վերապատրաստման մասին պատմող հոդվածը, https://goo.gl/1ztVgR*

******

Ընթացիկ տարվա երկրորդ կիսամյակում «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան կշարունակի աշխատանքները վերոնշյալ ռազմավարական ուղղություններով: Միաժամանակ, տեղի ունեցած համակարգային քաղաքական փոփոխությունները նոր համատեքստ են ստեղծել մեր գործունեության համար: Անհրաժեշտ է, որ կանանց նկատմամբ բռնության հիմնախնդրի հաղթահարումը դիտարկվի իբրև «Նոր Հայաստան» կառուցելու նախապայման: Պայքարն ընտանեկան և գենդերային հիմքով բռնությունների ու խտրականության դրսևորումների դեմ պետք է դրվի հեղափոխական կառավարության քաղաքական օրակարգի հիմքերում: ԸԿՆԲԿ-ն սա դիտարկում է իբրև իր ջատագովության առաջնային նպատակ:

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի աջակիցներ

«Քվինա թիլ Քվինա» հիմնադրամ

Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան

Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամ

«Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիա ՀԿ

Հաշվետվության հեղինակ՝ Անահիտ Սիմոնյան

Խմբագրումը՝ Աննա Նիկողոսյանի

Հաշվետվությունը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական աջակցությամբ:

© «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա, 2018թ.

Ընդդեմ կանանց նկատմամբ
բռնության կոալիցիա

Coalition to stop violence
against women

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

www.coalitionagainstviolence.org